

## **ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏՈՆԵՐԸՆՍ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ» ԵՎ «ԶԱՏԿԻ» ՃԱՌԵՐԻ՝**

*Ռաֆիկ Վարդանյան, Լևոն Սարգսյան*

Անանիա Շիրակացու տոմարական-տոնացուցային ժողովածուի հաստիքներից մեկը նվիրված է Քրիստոսի կարևորագույն տոներին ու դրանց մեկնությունները: Այն պարունակում է երկու ճառ՝ հետևյալ ենթավերնագրերով՝ 1. «Անանիա Շիրակունույ համարաւղի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» և 2. «Անանիա Շիրակայնույ համարաւղի ասացեալ Զատիկն Տեառն»:

«Յայտնութեան» մեկնողական ճառն սկսում է հետևյալ նախադասությամբ. «Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տանից Աստուծոյ էր յոր հասաք եւ զոր ճառել արժանաւոր եղաք»<sup>2</sup> և ավարտվում այսպես. «Արդ՝ այսուհետեւ յայտ արասցուք զանցնիւր (Ողղել՝ զանցն ի [ո]ւ [թ] = ի ու[թ]) ազգացն, եթե յորում ամսեան կամ քանի աւուրցն լինի սուրբ Յայտնութիւնն:

Առաջին՝ Յայտնութիւն ըստ Եբրայեցոցն Տիբեթ ամսոյ, որ [ար] ԻԱ է միշտ:

Երկրորդ՝ Յայտնութիւն ըստ Ասորոց Քանուն ամսոյ որ [ար] Զ է միշտ:

Երրորդ՝ Յայտնութիւն ըստ Արաբացոց Արսոն ամսոյ որ [ար] ԻԱ է միշտ:

Չորրորդ՝ Յայտնութիւն ըստ Եթիովպացոց Թերաս ամսոյ որ [ար] ԺԱ է միշտ:

Հինգերորդ՝ Յայտնութիւն ըստ Եգիպտացոց Տուբիլ ամսոյ որ [ար] ԺԱ է միշտ:

Վեցերորդ՝ Յայտնութիւն ըստ Մակեդոնացոց Մակատրիոն ամսոյ որ

[ար] ԻԱ է միշտ:

Եվթներորդ՝ Յայտնութիւն ըստ Յունաց Եւգինեսոս ամսոյ որ [ար] Զ է միշտ:

Ութերորդ՝ Յայտնութիւն ըստ Հռոմեացոց Յոնոարի ամսոյ որ [ար] Զ է միշտ:

Իններորդ՝ Յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ է ըստ չորից-չորից ամաց:

Եւ եթե զհարդ գիտելի է, եւ կամ ընդէր ոչ առկայացեալ ըստ այդոց ազգաց, յիւրում տեղոջ պատմեցից ըստ կարգի տոմարին»<sup>3</sup>:

Անանիա Շիրակացին հստակ ասում է, որ Յայտնութեան ու Զատիկի տոներից հետո պատմելու է ազգերի տոմարների պատճենների մասին «ըստ կարգի տոմարին»: Իսկ «Զատիկ» ճառում շարունակում է. «Եւ արդ զինչ եւս պակասիցէ այսուհետեւ, եթէ ոչ յայտնել կարգաւորութեամբ զտոմար իւրաքանչիւր ազ-

<sup>1</sup> Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

<sup>2</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 283-294:

<sup>3</sup> Անդ.:

զաց, սկիզբն արարեալ առաջի կարգել զտոմար ազգին Եբրայեցոց, զի նա իսկ է գլուխ եւ արինակ ամենայն ազգաց»<sup>1</sup>:

Վերջապես, Անանիա Շիրակացին գրում է, որ «Զատկի» ճառից հետո և, փաստորեն, պատճեններից առաջ դնելու է իր կազմած Զատկացուցակը՝ «ՇԼԲ կարգը» և բերում է իր կազմած հիշատակարանը: Բերենք այդ վկայությունը ևս՝ «Եւ արդ՝ այսուհետեւ ամի ամի զնոյն տրտմութիւն զոր սգեցան առաքեալքն, պահաւք զգեցցուք եւ մեք. Եւ ի Յարութեան միաձնին ուրախ լիցուք, հաղորդելովք մարմնոյ եւ արեան ճշմարիտ գառնին, որ է հացն երկնաւոր: Եւ վասն այսորիկ ի հարկէ ամի ամի առնէ եկեղեցի զզատիկ բաղարջակերացն. Զի հաստատեալ կացցէ յիշատակ չարչարանաց Փրկչին. Եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք, եւ վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ զաշխարհ ամենայն, վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն եւ երկուց ամաց միանգամայն համարեցայ ըստ թուոյ Աղեքսանդրացոցն ի ՊԻԸ (ուղղել՝ Թ) ամէն: Մինչեւ յամն ՌՅԿ, այնոցիկ, որոց կացցեն յաշխարհի, կազմեցի եւ Անանիա որդի Յովհաննիսի Շիրակայնոյն եւ դրոշմեցի առանձինն զբնաւ մի մի ամ ՇԼԲ, ԻԸ կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի զմի կարգ առ մի մի տարի»<sup>2</sup>:

Ի դեպ, Անանիա Շիրակացին Զատկի հիշատակարանում գրում է ոչ միայն «ՇԼԲ կարգի» մասին, այլև 28 կանոններ ստեղծելու մասին: Այն, ինչպես կտեսնենք, առկա է իր տոմարի մեկնություն մեջ, որը պահպանել են Հովհաննես Կոզեռնը և ուշ շրջանի տոմարական ժողովածուները:

Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացու «Յայտնութեան» ու «Զատկի» ճառերը Դավիթ քահանայի «զշարադրութիւն տոմարաց»-ում ընդօրինակվել են կողք-կողքի: Նշանակում է, որ Անանիա Շիրակացու տոմարական-տոնացույցային ժողովածոում եղել են միասին, որը հաստատվում է «Յայտնութեան» ճառի սկսվածքով, որը ներկայացվեց վերևում:

Անանիա Շիրակացին «Յայտնութեան» ճառում տալիս է Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան (Մկրտություն) հունվարի 6-ի, ինչպես և Քրիստոսի Ծննդեան դեկտեմբերի 25-ի տոների զարգացման պատմությունը (4-րդ-6-րդ դդ.) և ձևակերպում իր տեսակետը՝ հիմնվելով Աստվածաշնչի, Առաքելական, առանձնապես Աստրական, կանոնների<sup>3</sup>, Նիկիայի ժողովի և դրա մասնակից Մակար Երուսաղեմացու թղթի<sup>4</sup>, Կյուրեղ Երուսաղեմացու թղթի և, հատկապես, «Կանոնադրու-

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 299:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Սահմանք եւ կանոնք զոր եղին աշակերտքն Քրիստոսի եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ Տեառն, Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատութեամբ՝ Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 18-66:

<sup>4</sup> Երանելոյն Մակարայ՝ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի հայս, Կանոնագիրք հայոց, հ. Բ, աշխատա.-մբ՝ Վ. Հակոբյանի, Եր., 1971, էջ 216-229:

թիւն ընթերցուածոց»-ի<sup>1</sup>, Գրիգոր Նազիանզացու կամ Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառաշարի՝ Քրիստոսի Ծննդյան ու Մկրտութեան<sup>2</sup> միավորներից<sup>3</sup>, ինչպես և Հուստինիանոսի պատմութեան՝ իր իսկ կողմից գրած «Ժամանակական կանոնի» «Կայսերաց» հատվածի վրա, հատկապես, Երուսաղեմացոց գրած թղթի վրա, որը բերել ենք «Ժամանակական կանոնի» քննութեան մեջ:

Անանիա Շիրակացին գրում է. «Տաւն սրբոյ ծննդեանն Քրիստոսի (դեկտեմբերի 25-ին) ԲԺ աւուրբ յառաջ քան զտաւն մկրտութեանն (հունվարի 6-ին), ոչ կարգեցաւ ի սրբոց առաքելոցն, եւ ոչ ի նոցուն փոխանորդացն, որպէս եւ յայտնի է ի կանոնաց սրբոց առաքելոցն: Քանզի գրեալ է ի վեցերորդ (ուղղել՝ եւթներորդ) գլուխ կանոնացն այսպէս. եթե՛ կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թե եղիցի տաւն ծննդեանն եւ Յայտնութեանն տեառն եւ փրկչին մերոյ (որ է) գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցւոյ, որ աւր ԻԱ է տիրեթ ամսոյ, որ է Զ յունուարի ըստ Հռովմեացւոց»<sup>4</sup>:

Բերենք Ասորական առաքելական կանոնը. «Է. Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թե եղիցի տաւն ծննդեանն եւ Յայտնութեանն տեառն եւ Փրկչին մերոյ որ է գլուխ եւ սկիզբն տաւնից եկեղեցւոյ, որ Զ յունուարի ամսոյ, ըստ յունարէն թուոյ. Եւ մեծապէս խմբեսցեն զտաւնն զայն ցնծութեամբ եւ ուրախութեամբ, սաղմոսիք եւ արհնութեամբ, եւ երգովք հոգեւորաւք, եւ ընթերցցին գիրք մարգարէականք եւ առաքելականք»<sup>5</sup>:

«Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի, ի սուրբ ժողովին Նիկիա ոչ եղեւ ընկալեալ տաւն այս ի սրբոց հարցն, այլ ըստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն սահմանեցին տաւնել» նախադասութեան մեջ Անանիա Շիրակացին, կարծում ենք, ակնարկում է Անտիոքի ժողովի կանոնները, որոնք Առաքյալներին են վերագրում «Ընթերցուածոց գիրքը», ինչպես և Մակարի թուղթը, այն է՝ «եւ յայտ է ի թղթոյ երանելոյն Մակարա հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայցս գրեաց աշխարհ յաղագս խրատու սրբոյ Մկրտութեանն. Քանզի նա մի էր ի սրբոց ՅԺԸ հարանց, որ ի Նիկիա»<sup>6</sup>:

Անանիա Շիրակացին շարունակում է, որ Կոստանդիանոսի որդի Կոստանդոսի ժամանակ (337-361 թթ.) «ընկալեալ եղեւ տաւն այս (դեկտեմբերի 25-ին տոնելը) ի դրան արքունի (Հռոմ-Ռ. Վ.). եւ ամենայն տեղիս որ ոք եւ կամէր

<sup>1</sup> Գրչագիր, թիվ 985, էջ 237ա - 241բ:

<sup>2</sup> ՄՄ ձեռ. 946, թթ. 724բ-827ա և 727ա-729բ:

<sup>3</sup> Տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացի հայ մատենագրության մեջ, Եր., 1983, էջ 146-147:

<sup>4</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283:

<sup>5</sup> Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 32:

<sup>6</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283-284:

տաւնել, համարձակութեամբ տաւնէին, բայց ի մայրաքաղաքացն (Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Անտիոք և Եփեսոս) չորից հայրապետացն, որ ունէին զաթոռ սրբոց ավետարանչացն: Քանզի առ սովաւ դեռ չէր յափշտակեալ զաթոռ սրբոյն Յովհաննու Եփեսոսէ Կոստանդնուպոլոսի եւ յայտ է ի կանոնադրութենէ ընթերցոածոց սրբոյն Կիրդի, քանզի գրեալ է այսպէս. եթէ ի ԻՅ ամսոյն ղեկտեմբերի է տաւն դաւթի եւ Յակովբու, զոր յայդ քաղաքս ծնունդ Քրիստոսի առնեն. Այսպէս եթէ վասնզի Հայրապետն ամենայն ուխտին եւ բազմութեամբ ժողովրդականան ի Բեթղէմ գալով տաւնէ, եւ սակաւք ի քահանայից, որք ի քաղաքին (Երուսաղեմ) իցեն ընթերցոածքն, եւ վասն այսր գրեաց ասեն թէ յայդ քաղաքս, որպէս թե զԲեթղէմ է ակնարկելով: Եւ զայս ոչ որ երբեք ի լաւ իմացողացն յանձն առնու, զի թէ այդպէս ունիմք հի՛մ զկանոն ծննդեանն ի վեց յունոարի կարգեաց նոյն ինքն Կիրեղ: Քանզի գրեալ է ի սկզբան կանոնքն այսպէս. թէ տաւն սրբոյ Յայտնութեան կատարի ի յունոարի, որ վեց էր ամսոյն, ժողովին ի հովանոցն, եւ զայս ինչ կանոն կատարեն, եւ ապա ի Բեթղէմ է եւ ի յայրին: Ահա յայտնապէս ցուցանէ ի միում աւուր տաւնել զերկոսին»<sup>1</sup>:

Մեր ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ Նիկիայի ժողովից (325 թ.) մինչև Անտիոքի ժողովը (341 թ.) ստեղծվել է «Կանոնադրութիւն ընթերցոածոց»-ի երկու տարբերակ, որոնցից մեկը՝ Երուսաղեմյանը, Անտիոքի ժողովականները վերագրել են առաքյալներին և ընդունել են իբրև առաջին անգամ համակարգված համաքրիստոնեական տոնացույց, իսկ 2-րդ տարբերակը մերժել են: «Կանոնադրութիւն ընթերցոածոց»-ի մեջ Քրիստոսի Ծնունդն ու Յայտնութիւնը դրված էր հունվարի 6-ին, իսկ մյուս տարբերակի մեջ, հավանաբար, Քրիստոսի ծնունդը դրված էր ղեկտեմբերի 25-ին: Այդ է հուշում Անանիա Շիրակացու տեղեկութիւնը, երբ գրում է, որ ծնունդը ղեկտեմբերի 25-ին տոնվեց Կոստանդիոսի (337-361 թթ.) արքունիքում որոշ հավատացյալների կողմից ու չընդունվեց. «ի մայրաքաղաքացն չորից հայրապետացն որ ունէին զաթոռ սրբոց ավետարանչացն»:

Անանիա Շիրակացին հղում է Կյուրեղ Երուսաղեմացու «Կանոնադրութիւն ընթերցոածոց»-ը, որը երուսաղեմյան տոնացույցի երկրորդ խմբագրութիւնն էր՝ կատարված 380-386 թթ., որտեղ դեռևս ղեկտեմբերի 25-ի տոնը կատարվում էր որոշ քաղաքներում, այսինքն՝ Արևմտյան հռոմեական կայսրութիւնից տեղափոխվել էր Արևելյան հռոմեական կայսրութիւնն որոշ քաղաքներ (Կոստանդնուպոլիս), իսկ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնը հունվարի 6-ին տոնելու կարգը դեռևս գերակշռող էր Արևելյան հռոմեական կայսրութիւնն մեջ: Այդ

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 285:

ավանդույթը շարունակվեց, որը ցույց է տալիս համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակը՝ թարգմանված ու խմբագրված Երուսաղեմի տոնացույցից 422 թ. Սահակ կաթողիկոսի կողմից: Ավանդույթը տևեց մինչև Հուստինիանոս 1-ինի բռնությունները (553 թ. և 560 թ.), որտեղ հայերին գրած նամակում երուսաղեմացիները բողոքում են, թե Հուստինիանոսի կարգադրությամբ եկեղեցիները տոները կատարել են դեկտեմբերի 25-ին և փետրվարի 2-ին ամբողջ Արևելյան հռոմեական կայսրության տարածքում բացառությամբ Հայոց եկեղեցու՝ պարսից տիրապետության տակ գտնվելու հետևանքով:

Ի դեպ, Ասորական կանոնները, ըստ ուսումնասիրողների, բանավորից գրավորի վերածված 4-րդ դարի վերջերին, իսկ մեր հաշվումներով 366 կամ 377 թ., հայերեն է թարգմանվել 547 թ. (թելադրված Հուստինիանոսի քաղաքականությանը ընդդիմանալու անհրաժեշտությունից), որտեղ Քրիստոսի Ծնունդն ու Յայտնությունը դրված են հունվարի 6-ին և վերագրված առաքյալներին, արտացոլում են 4-րդ դարի 325-341 թթ. իրողությունը, և օգտագործված է Անանիա Շիրակացու կողմից: Ասվածից հետևում է, որ Անանիա Շիրակացին պաշտպանում էր կաթողիկե եկեղեցու նախնական սկզբունքները, Արևելյան այն եկեղեցիներին ու հավատացյալներին, որոնք չէին ընդունել դեկտեմբերի 25-ը և դրանից ածանցված այլ տոնական օրերը, ինչպես և Հայոց եկեղեցու տեսակետները և քննադատում քաղկեդոնական հույներին և այլոց, ովքեր փոխել էին կաթողիկե եկեղեցու, այն է՝ նախաեփեսոսյան ավանդույթը:

Անանիա Շիրակացին ներկայացրել է Ծննդյան տոնի կատարման տարբեր ելակետները, այն է. 1. «բայց մեք տեսցուք, որ եւ Զաքարիայի պապանձմամբն հնարեն յոյնք զվեցամսեայ աւուրս յղութեան Եղիսաբեթի, որով մարթիմք իմանալ զաւրս աւետաբերութեանն Գաբրեղի: Քանզի այսպէս ասեն յոյնք եթէ ի նոյն աւուր յորում պապանձեցաւ Զաքարիայ ի նմին աւուր մերձեցաւ ի կին իւր, եւ յղացաւ ի նմին իսկ աւուր, ուստի թուեն աւուրս հարիւր ութսուն, որ դիպեցուցանէ ի քսան եւ եւթն (ուղղել՝ հինգ արն) մարտի զաւր աւետաւորութեանն Գաբրեղի. Եւ անտի թուեն աւուրս երկերիւր եաւթանասուն եւ վեց զաւուրս յղութեան սրբոյ աստոածածնին, ըստ տասնամսեայ աւուրց անդրանիկածնութեան, որ դիպեցուցանէ զծնունդն ի քսան եւ հինգ դեկտեմբերի»<sup>1</sup>:

2. «Ապա զհարդ ի մէջ երկուց զյխաւոր տանիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն. Եւ ի տուն երթալ մերձենայր ի կինն. Եւ կամ ի նոյն աւուր տանին; Եւ արդ մի լիցի մեզ հակառակել եւ վիճաբանել ի ճարտարութիւն արոեստիս պանձալով, այլ ճշմարտութեանն հաւանեսցուք եւ աստոածայնոց գրոց, որպէս եւ

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 288:

յայտնի իսկ եղև ի տասն թշրին ամսոյ պապանձումն Զաքարիայի, որ է ԻԷ սեպտեմբերի. Եւ ի ԻԲ թշրին ամսոյ մերձաւորութիւն Զաքարիայի, եւ յղութիւն Եղիսաբեթի, եւ թուեալ զաւուրս վեց ամսոյն հարիւր ութսուն ար, ցուցանէ ի վեշտասան նիսան ամսոյ, որ լինի վեց ապրելի ըստ Հռովմեացոցն ուր եղեն աւետիք սրբոյ կուսին. Եւ թուեալ տասնամսեայ աւուրս անդրանկածնի, կատարի երկերիւր եւթանասուն եւ վեց ար ի քսան եւ մի տեբե ամսոյ, որ է վեց յունոարի ըստ հռովմայեցոց: Յայսմ կացցուք հաստատուն, անխախտելի, եւ քաւ (և) մի լիցի մեզ երկուս բաժանել, այլ ի միում աւուր արասցուք զծնունդն եւ զմկրտութիւնն. Եւ զերկոցունց այլ պահելով զկարգս, հետեւեսցուք սրբոց առաքելոցն եւ երանելեաց հարցն, որք ի Նիկիայ, եւ մերոց վարդապետոցն»<sup>1</sup>:

Անանիա Շիրակացին «Յայտնութեան» ճառում պաշտպանում է Հայոց եկեղեցու՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոները միասնաբար հունվարի 6-ին կատարելու տեսակետը և քննադատում քաղկեդոնական հույներին և այլոց տեսակետը, համաձայն որի, Քրիստոսի ծնունդը կատարում էին դեկտեմբերի 25-ին, իսկ Յայտնութիւնը՝ հունվարի 6-ին:

Միանգամայն հասկանալի է, որ քննարկվող տոների ամսաթվային տարբերությունները բխում են Զաքարիայի պապանձման ու Եղիսաբեթի հղության օրերի մեկնությունից: Համաձայն Հայոց եկեղեցու տեսակետի, որն առաջին անգամ հիմնավորել է Անանիա Շիրակացին, Զաքարիան պապանձվել է սեպտեմբերի 27-ին և տուն է գնացել 12 օր (Քավության ու Տաղավարահարաց տոներից) հետո, և Եղիսաբեթը հղիացել է հոկտեմբերի 9-ին: Այս ելման կետից էլ՝ 12 օրվա տարբերությամբ, հաշվել են Աւետեաց Աստոածածնի տոնի օրը՝ ապրիլի 6-ին, որտեղից էլ՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնի օրը ստացել են հունվարի 6-ը: Իսկ մյուս տեսակետի պաշտպանները Զաքարիայի պապանձումն ու Եղիսաբեթի հղությունը միաժամանակ կանոնել են սեպտեմբերի 27-ին, որտեղից էլ Կույսի ավետումը լինում է մարտի 25-ին, իսկ Քրիստոսի Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին. Քրիստոսի Մկրտությունը (Յայտնութիւնը) առանձնացել է և կատարվել հունվարի 6-ին:

\* \* \*

Անանիա Շիրակացին հաջորդ ճառը՝ «Ի Զատիկն Տեառն», նվիրել է Քրիստոսի Հարություն տոնին: Մինչև այդ ճառի բովանդակային քննությանն անցնելը, նշենք՝ հեղինակի տոմարական մատյանի կառուցվածքի մասին վկայությունը, այն է. «Արդ վասն չափոյ մեծութեանն և զրից հաստատութեանն եւ իշխանութեանցն եւ որոշմանցն եւ այլոց աստեղացն կարգի նահանջմանաց

<sup>1</sup> Անդ, էջ 289:

ասելն առ այժմ արգելեցի, մինչև բովանդակեցից զխորհուրդ սրբոյ զատկիս եւ զտոմար ամենայն ազգաց. Եւ ապա պատմեցից վերջ եւս թէ զինչ վասն այսր արտաքինքն եւ զինչ եկեղեցականքն»<sup>1</sup>:

Անանիան ինքն է նշում, որ ժողովածուում Զատկի և տոմարի մեկնությունից հետո տալու է «Անանիայի Շիրակունույ Համարողի առ խոստացեալսն», «Անանիայի յաղագս (կամ վասն) երկնի», «Անանիայի Շիրակացույ ասացեալ յաղագս (կամ վասն) արեգականն» մեզ հասած վերնագրերով բնագրերը, որոնք երբեմն չունեն հեղինակի անվան հիշատակությունը: Դրանց բովանդակությունն ամբողջապես համապատասխանում է վերոբերյալ տեղեկություններին: Դեռ ավելին, հեղինակն ասում է, որ պատմելու է, թե դրանց մասին ինչ են ասել «արտաքինքն» և «եկեղեցականքն»:

Ասենք նաև, որ Անանիա Շիրակացին Զատկի ճառի բազմաթիվ հատվածներում օգտվել է նաև Անդրեասի 200-ամյա Զատկացուցակից, նրա Զատկի մեկնությունից, ինչպես և հանվանե հիշում է Գրիգոր Ասվածաբանին, իսկ Էսայան ու Իրեոնյան ՇԼԲ Զատկացուցակների մասին պատմող ու մեկնողական հատվածները, որոնք արժեքավոր տեղեկություններ են համաքրիստոնեական Զատկացուցակի կազմման վերաբերյալ 6-րդ դարի բնագրերի բացակայության պատճառով դարձել են արժեքավոր ու առաջնակարգ սկզբնաղբյուր:

Անանիա Շիրակացին, համաձայն Աստվածաշնչի ու քրիստոնեական ավանդույթի, Զատկի տոնը կապելով Մովսեսի անվանը, Ելքի ու Քրիստոսի խաչելությանը՝ առնչում է իր հաշվման համակարգերի հետ:

Բերենք այդ վկայությունները՝ 1. «Զտան սրբոյ զատկի ուսաք ի Մովսեսէ և յԵլիցն Իսրայելի յԵգիպտոսէ. Քանզի գրեալ է այսպէս. խաւեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ընդ Ահարովնի յերկրին եգիպտացոց եւ ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Եւ յառաջ մատուցեալ ասէ. Ի տասներորդում աւուր (= նիսան 10 = մարտի 31) ամսեանն այսորիկ առցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տունս, ապա թէ ոչ ըստ տանց տոհմից յաղագս աղքատութեանն հանկանակեալ: Եւ զնովիմբ ածեալ ասէ. Եւ եղիցի պահեալ մինչեւ ցտասն եւ չորս աւուր (= նիսանի 14 = ապրիլի 4) ամսոյն այսորիկ. Եւ զենցեն ընդ երեկս եւ շաղաղեսցեն զբարաւորն եւ զերկոսեան սեմս յարենէ, որ եղեւ պահպանական անդրանկացն առ ի սատակելէն: Արդ թեպէտ եւ ստուեր հանդերձելոյն, որպէս եւ աստուածային առաքեալ Համարի, եւ արինակ Քրիստոսի. Զի եւ եմուտ իսկ Քրիստոս ի տասներորդում աւուր ամսեանն առաջնոց (= նիսան 10 = մարտի 31) յԵրուսաղէմ յաւուրն արմաւենեաց. Եւ պահեցաւ մինչեւ ցչորսն եւ տասն աւուր ամսոյն (= նիսանի 14 = ապրիլի 4), յորում երե-

<sup>1</sup> Անդ, էջ 293:

կոյին ետ իսկ զկենդանարար մարմինն սրբոյ առաքելոցն ի կերակուր, եւ կատարեաց զխորհուրդն որ յաղագս այնր»<sup>1</sup>:

2. «Եւ ասէ (յեսու) նորոգումն կարգաց եւ արինաց որպէս եւ Մովսէս յեւանելն յԵգիպտոսէ. քանզի եւ զանցանելն զՅորդանան գետով ելս կոչէ Եգիպտոսէ»<sup>2</sup>:

3. «Ապա եւ յետոյ Եզրաս նորոգեալ կարգեաց զինն եւ տասներեակ լուանի ազգին երբայցեցոց. եւ անխափան տանեցաւ մինչեւ զխաչելութիւն Փրկչին. Յորում դիպ(եց)աւ ի չորեքտասաներորդում նիսան (= նիսանի 14 = ապրիլի 4) լրումն լուանի յաւուր հինգշաբ(ա)թուջ ըստ արինակի յելիցն Եգիպտոսէ»<sup>3</sup>:

4. Անանիա Շիրակացին 28 կանոնների մեջ «Զի՞նչ է նահանջ» հարցի պատասխանի մեջ աւելացնում է. «դարձեալ եւ ի հասարակ(աւոր)ութիւն ազգացոյ, որոյ հասարակաւորութիւնքն ոչ են շարժեալ և յայտ ի յերբայցեցոցն է: Վասն զի արարչութիւնն ի հասարակաւորութեանն էր, եւ ի Դ յաւելեացն է միշտ: Եւ միշտ աստ մտանէ նիսան ամիսն առաջին, զոր արեգ<sup>4</sup> ամիս կոչեցին; Զի թէ եւ յիսրայէլ ծածուկ էր ժամանակ լինելութեան Է-իցն, եւ առաջին գոլ ամիսն յայտնեաց Աստուած յուսելն զսա առաջին. Եւ սոյն վկայեն գիրք եւ առաջինք: Արդ՝ պատարագն Աբրահամու ի ԺԴ նիսան. Եւ Ելքն Ադամայ ի դրախտէն. Եւ խաչելն Քրիստոսի. Ելքն յԵգիպտոսէ. մուտն յԵրկիր: Եւ զժամանակա զայս եւ զգործս ի գարնանային յեղանակին ասեն կատարելագորութիւնքն: Ուստի յայտ է անշարժութիւն հասարակաւորութեանն»<sup>5</sup>:

Փաստեցինք, որ Անանիա Շիրակացին Ելքի ու Քրիստոսի խաչելության տարիները, իսկապես, կապել է ապրիլի 4-ի լրման տարվա հետ՝ իբրև 19-ամյակի և Արարչության (Ադամի) 1-ին տարի, ինչպես և Արարչության համակարգերով հաշվարկել է վերոնշյալ տարիները՝ առնչելով ապրիլի 13-ի և ապրիլի 4-ի, ինչպես և ապրիլի 2-ի՝ առաջին տարիներով սկսվող 19-ամյակի հետ, որը 532-ամյա պարբերաշրջանի բաղադրամասն էր: Նա համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջինն էր, որ համակարգեց և հաշվարկեց Ելքի ու Խաչելության տարիները՝ ավանդությունները վերածելով թվականության համակարգերի ու ներկա թվականի:

Անանիա Շիրակացին Հարություն տոնի Զատիկ անվան մասին բերում է վկայություններ և դիտարկում, «Եւ անուանի տան զատկիս յերբայցեցոցն՝ փասկա ըստ նոցա ձայնին, որ թարգմանի անց. Եւ եղև իսկ յեգիպտացոց ի քանանացոց յաշխարհն:

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 292:

<sup>2</sup> Անդ, էջ 294:

<sup>3</sup> Անդ, էջ 294:

<sup>4</sup> Զուգադրել են Անդրեասի 200-ամյակի հայ թարգմանիչները:

<sup>5</sup> **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն եւ տոմար, Եր., 1940, էջ 67:



Ջայս եւ երանելին Գրիգոր Աստուածաբան այսպէս ասէ. Ոմանք կարծեցին զանունս զայս փրկութեան չարչարանաց լիալ եւ ապա հեղղենացի արարեալ զձայն զփիրն ի պէ փոխեցին, եւ զկենն ի քէ, պապա զատ փրկչին անուանեցին, ըստ բանին Մովսէսի, որ երկրորդումն արինացն ասէ այսպէս. զեթն աւուր բաղարջ կերիցես ընդ նմա. Զի հաց չարչարանաց է»<sup>1</sup>:

Ապա Անանիա Շիրակացին գրում է. «Բայց մեզ քաւ լիցի տանել ընդ նոսա (հրեաների, պողիանոսների, նույնիսկ Իրեոն վարդապետի) և կրել նզովս. քանզի ամենայն ջան սրբոց հարցն վասն ի նոցանէ զատուցանելոյ էր, յոր եւ հայաստանեացս առաւել ճշմարտապէս անուանի զատիկ Տեառն, այսինքն զատուցանել յամենայն հեթանոսականաց և հրեականաց տանից, սրբեալ եւ լուալ տանիցս Տեառն տան, եւ ժողովոց ժողով»<sup>2</sup>:

Անանիա Շիրակացին ներկայացնում է նաև Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի համառոտ ու քրիստոնեական Զատիկի սկզբնավորման ստույգ պատմութիւնը: Նա գրում է. «Արդ թեպէտ եւ այս ամենեքեան (19-ամյակները-Ռ. Վ.) նախագոյն կարգեցան, սակայն ոչ ընդհանուր աշխարհն ուսան վասն նեղութեան հալածանացն որ ի վերայ քրիստոնեից, այլ տանէին զոյգ ընդ հրէից, տան խառնակ եւ անսուրբ մինչեւ յաւուրս երանելոյն կոստանդիանոսի եւ զսուրբ ժողովն Նիկիայ: Եւ ապա ասացաւ ի թագաւորէն, մի եւս այսուհետեւ առնուլ տան խառնակ ընդ տիրասպան ազգն հրէից. Տուեալ հրաման ի մէջ առնուլ զիննեւտաներեակն լուսնի զատկաց, որք կարգեալ էին ի վերայ ճառեալ արանցդ (Արիստիդէս Մերրի փիլիսոփա Աթենացի, Ղեւոնտէս հայր Որեւզենի, Որեւզենէս որդի նորուն, Անատողիա եպիսկոպոս զաւոզիկեցուց եկեղեցւոյն), առնուլ եւ աշակերտս յամենայն ազգաց քրիստոնեից եւ ուսուցանել զնոսա տոմար. Եւ զատուցանել զքրիստոնեականս ի հրեականէն. Եւ թեպէտ եւ ըստ հրամանի թագաւորին գործն կատարէր, այլ ոչ անտարակուսելի կարգեցաւ արինակք»<sup>3</sup>:

Անանիա Շիրակացին է առաջին անգամ հիշատակում Անդրեասի 200-ամյա Զատկացուցակի մասին. «Յետ որոյ եւ յաւուրս Կոստանդեայ որդւոյ Կոստանդիանոսի, Անդրեաս եղբայր Մագնոս եպիսկոպոսի, կարգեաց տոմար երկերիւր ամաց. Սակայն եղ այն ոչ անտարակուսելի: Ապա ի սպառելն Անդրեասեան տոմարին ամաց երկերիւրոց յաւուրս Յուստիանոսի թագաւորի, եղեւ բազում խնդիր հմտագոյն իմաստասիրաց՝ վասն որ բերելոյ ճշգրտիւ զկարգ

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 294:

<sup>2</sup> Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 297:

<sup>3</sup> Անդ, էջ 295:

իննեւտասն բոլորակին, որ իննսուն եւ հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագայութեան նոյն յոլովից թուեցաւ զգժոխին, զի բազում ամալք ըստ աւուրց բոլորակին չտողէր զկնի բեսիքիստոնն»<sup>1</sup>:

Փոքր-ինչ հետո Էասյան Շ-եակի առնչությամբ հայտնում է Անդրեասի 200-ամյա Զատկացուցակի վերջին տարվա լրման օրը՝ նիսանի 4 = մարտի 25-ին, հնարավորություն է տալիս բացարձակ թվական ստանալ և վերականգնել Անդրեասի 200-ամյակը:

Անանիա Շիրակացին Անդրեասի 200-ամյակի, որը կազմված է 95 + 95 + 10 տարուց, օրինակով ցույց է տալիս, որ նախորդ շրջանում կազմված զատկացուցակներում, որոնք հիմնված էին 95-ամյակի (19 x 5) վրա, լուծված չէր բեսեքիստոնի՝ արև փոքր շրջանի կամ շաբաթական շարքի կրկնություն 28-ամյա (4 x 7) պարբերաշրջանի խնդիրը, ինչի հետևանքով դրանք կատարյալ չդարձան, այսինքն տոնական օրերը նույնությամբ չկրկնվեցին, իսկ Էասյան ՇԼԲ-ն (19 x 28), լուծելով այդ խնդիրը, դարձավ կատարյալ ու անտարակուսելի և աստիճանաբար ընդունվեց քրիստոնյա աշխարհում՝ իր տարբերակներով, որոնք լուծել էին 19-ամյակի 1-ին տարվա հարցը յուրովի, փոխել էին զատկական լրման օրերից մեկը՝ ինչպես Իրենի Շ-եակում:

Անանիա Շիրակացու՝ նիսան 4 = մարտի 25-ի լրման տարվա վկայությունները՝ ստացել ենք Անդրեասի 200-ամյակի վերջին տարին՝ 552 թ. ներկա թվականով, որը համարժեք է Անտիոքացոց 600 թ.-ին, և վերականգնել ենք Անդրեասի 200-ամյա Զատկացուցակը:

Հարկ է նշել, որ Անանիա Շիրակացին, հիմքում ունենալով Անտիոքացոց 600-րդ՝ Անդրեասի 200-ամյակի վերջին տարին, կանոն սահմանեց, որի համաձայն վերցրել են 600 հաստատունը, գումարել հայոց թվականը և ստացել Անտիոքացոց թվականը՝ հայոց մեծ թվականի կտրվածքով: Անանիա Շիրակացու սահմանած կանոնը չփոխվեց, թեև հայոց մեծ թվականի Նավասարդի 1-ը (= մարտի 20) 1460-ամյա պտույտից հետո կրկին համապատասխանեց գարնանային օրահավասարի օրվան, և հայոց թվականը մեկ տարով ավելացավ:

Անանիա Շիրակացին տալիս է ՇԼԲ Զատկացուցակի սկզբնավորման պատմությունը, որն այլ սկզբնաղբյուրներից հայտնի չէ: Նա գրում է. «Ապա ի սպառելն Անդրեասեան տոմարին ամաց երկերիւրոց յաւուրս Յուստիանոսի թագաւորի, եղև բազում խնդիր հմտագոյն իմաստասիրաց՝ վասն որ բերելոյ ճշգրտի զկարգ իննեւտասն բոլորակին, որ իննսուն եւ հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագայութեան նոյն յոլովից թուեցաւ զգժոխին, զի բազում ամալք

<sup>1</sup> Անդ:

ըստ աուրց բոլորակին չտողէր զկնի բեսիքիստոնն, վասն որոյ եղեալ քննութիւն յԱղէքսանդրիայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասիրութեանց, գտաւ անտարակուսելի արիւնակ ՇԼԲ ամաց շրջաբերութեանն, որ ստուգիվ ցուցանէ զաւուրս չորեքտասան պասեքին (Ջատկական լրումների օրերը – Ռ. Վ.): Արդ ոչ եթե նորաձեւեալս ինչ աղարտեցին զվաղնջուցն դրոշմեալ կանոն, այդ ճշգրտիվ զնոյն չորեքտասան յիննետասան յիննետասան թուոյ դրոշմեցին յարմարական ոճով, զի տրտում եւ անստուերագիր տպաւորեալ եղիցի դրովթիւնն: Եւ էին կարգող այսոցիկ գլուխ իմաստասիրաց՝ Աղէքսանդրացին Էաս, ունելով իւր ընկեր զհրեայն Փենեհեզ, որ ի Տիբերիդայ, զԳաբրիէղ յասորուոց, եւ զՅոհան յարաբացուոց, եւ զԱբդիէ յԵթիովպայ, զՍերգի ի մակեդոնացուոց, զԵւելոզի ի յունաց, զԳիգան ի Հռովմայեցուոց: Ունելով ընդ իւր եւ այլ ընկերս Էաս ի նոյն եգիպտացուոց զորոց անուանս ոչ յիշատակեցաք ի պատմութեանս. Բայց ընդ ամենայն ասի լինել արս երեսուն եւ վեց»<sup>1</sup>:

Հետայսու Անանիա Շիրակացին ներկայացնում է Շ-եակի 2-րդ՝ Իրեոն վարդապետի տարբերակը, որին դեռևս կանդրադառնանք: Այստեղ միայն նշենք, որ թեև Անանիան քննադատում է այդ տարբերակը, սակայն ամբողջական պատկերացում է տալիս դրա մասին ու հնարավորութիւն ստեղծում վերականգնելու ոչ միայն Իրեոնի 19-ամյակը, այլև ողջ ՇԼԲ –ամյա Ջատկացուցակը, որին նույնպէս անձանոթ են Շիրակացու ժամանակակիցները:

Արդ շարունակենք Էասյան Շ-եակի մասին Անանիա Շիրակացու գրառումները, որոնք հնարավորութիւն են տալիս որոշելու ոչ միայն Շ-եակի՝ իր հաշվման իմաստով առաջին, սկզբնավորման ու 19-ամյակի 1-ին, Անդրեասի 200-ամյակի վերջին տարիները, այլև վերածելու դրանք ներկա թվականի ու վերականգնելու դրանց ամբողջական պատկերը:

Բերենք այդ հատվածը. «...եւ մի փոխեսցուք զսահմանս հարցն. Եւ մի ընկալցուք զչորեքտասան լուսնի ի հինգ ապրեղի (ակնարկը Իրեոն վարդապետի 19-ամյակի 1-ին տարվա մասին է), այդ կարգեալն ի սրբոց հարցն. Եւ մի դիցուք այդ լրումն գլուխ բոլորի, բայց զհրամանեալն ի Տեառնէ զչորեքտասան նիսան եւ զայլոց ազգաց որ նմայն հանդիպին: Բայց Էասանք որ զԳ (ուղղել՝ ԻԳ) նիսան կարգեցին գլուխ բոլորի, եւ ոչ աղարտեցին զառաջինն. Բայց զի տոմարն Անդրեասեան երկերիւր ամացն յերիսն (ուղղել՝ ի չորսն) նիսան սպառեցաւ. Եւ սկիզբն հինգհարիւրեկին ի երեք (ուղղել՝ ԻԳ) նիսան եղեւ Վասն այնորիկ եզ ի գլուխ բոլորի ոչ ի սկզբանէ ելիցն եւ խաչելութեան, այդ նմին իսկ

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 295-296:

հինգհարիւրեակ բոլորին, բայց խոստովանեցին գլուխ բոլորին գշորեքտասան նիսան, զհրամայեալն ի Տեառնէ, որում եւ մեք հետեւեսցուք»<sup>1</sup>:

Մեր ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձել ենք Էասյան Շ-եակի խնդիրներին: Ամփոփելով ասենք, որ մարտի 25-ի լուսնի լրման տարով, որը Անդրեասի 200-ամյակի վերջին և անտիոքացիների 600-րդ տարին էր (= 552 թ.), ապրիլի 13-ի լրման տարով, որը Էասյան Շ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին տարին էր և Հայոց մեծ տոմարի 1-ին տարին՝ Զատկացուցակի կտրվածքով, Անանիա Շիրակացու՝ հաշվման իմաստով 1-ին տարին (= 553 թ.), լուսնի լրման ապրիլի 4-ի տարով, որը Էասյան 19-ամյակի 1-ին տարին էր, Հայոց մեծ թվականի 10-րդ տարին (= 562 թ.) ստացել ենք բացարձակ թվեր ու հիմնավորել, որ Էասյանները 9 տարի հետ են գնացել իրենց 19-ամյակի 1-ին տարուց, որպեսզի հասնեն Անդրեասի Զատկացուցակի ավարտի հաջորդ տարվան, այսինքն՝ Շ-եակի հաշվման իմաստով 1-ին տարուն, սակայն Էասյան Շ-եակն սկզբնավորվել և սկսել է գործադրվել 562 թվականին, այն է՝ նրանց 19-ամյակի 1-ին տարուց: Նշանակում է, որ Էասյաններն ունեցել են երկու սկիզբ: 1-ինը Շ-եակի հաշվման իմաստով սկզբի տարին էր, 2-րդը՝ իրենց դավանած 19-ամյակի 1-ին տարին: Միևնույն սկզբունքներով առաջնորդվել է Անանիա Շիրակացին, երբ կազմում էր Շ-եակ Զատկացուցակը՝ հռոմեացոց ու Հայոց շարքերով: Միակ տարբերությունն այն է, որ Անանիա Շիրակացին, հաշվելով իր 19-ամյակի 1-ին տարուց, որը 581 թվականն էր, 28 տարով հետ գնաց, որպեսզի հասնի Անդրեասի 200-ամյակի վերջին ու Անտիոքացոց 600-րդ տարվան հաջորդող տարուն:

Այլ խոսքով ներկա թվականի բացարձակ թվերով ստանում ենք Էասյան Շ-եակի հաշվման իմաստով 1-ին տարին՝ 553 թվականը և ստեղծման ու գործադրման, ինչպես և 19-ամյակի 1-ին տարին՝ 562 թվականը, որը հիմնավորվում է հայկական սկզբնաղբյուրների բազմաթիվ տեղեկություններով ու տարբեր թվականությունների համակարգերով, թեև նրանց տեղեկությունների հիմքը Անանիա Շիրակացու վկայություններն են:

Վերականգնենք Էասի և Անանիա Շիրակացու՝ զատկական Լուսնի լրման 19-ամյա աղյուսակները՝ հռոմեացոց տոմարի ամիս-ամսաթվերով, որոնք համարժեք են, և բաղադրենք Վ. Գրյունելի վերականգնած աղյուսակի հետ:

<sup>1</sup> Անդ, էջ 299:

Շ-եակի թվական	Ներկյա թվական	19-ամյակի ամիս-ամսա-թիվը հռոմ. տոմարով	Վերադիրներ	Շ-եակի 1-ին տարին՝ հաշվման իմաստով	Շ-եակի 19-ամյակի 1-ին տարին	19-ամյակի տարին՝ ըստ Վ. Գրյունելի	Լրման ամիս-ամսաթիվը՝ ըստ Վ. Գրյունելի
1	553	A 13	30	1	11	II	A 13
2	554	A 2	11	2	12	III	A 2
3	555	M 22	22	3	13	IV	M 22
4	556	A 10	3	4	14	V	A 10
5	557	M 30	14	5	15	VI	M 30
6	558	A 18	25	6	16	VII	A 18
7	559	A 7	6	7	17	VIII	A 7
8	560	M 27	17	8	18	IX	M 27
9	561	A 15	28	9	19	X	A 15
10	562	A 4	9	10	1	XI	A 4
11	563	M 24	20	11	2	XII	M 24
12	564	A 12	1	12	3	XIII	A 12
13	565	A 1	12	13	4	XIV	A 1
14	566	M 21	23	14	5	XV	M 21
15	567	A 9	4	15	6	XVI	A 9
16	568	M 29	15	16	7	XVII	M 29
17	569	A 17	26	17	8	XVIII	A 17
18	570	A 6	7	18	9	XIX	A 6
19	571	M 25	19	19	10	I	M 25

Ինչպես երևում է աղյուսակից, Վ. Գրյունելը 19-ամյակի լրման ամիս-ամսաթիվերը ճիշտ է վերականգնել, բայց 19-ամյակի 1-ին տարին համընկնում է ո՛չ հաշվման իմաստով 1-ին տարվա և ո՛չ էլ 19-ամյակի 1-ին տարվա հետ: Մինչդեռ ունենք հայկական սկզբնաղբյուրների, հատկապես, Անանիա Շիրակացու և Հովհաննես Սարկավազի աներկբա վկայությունները, որ Էասի ու Անանիա Շիրակացու Շ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին տարին նիսան 23 (= A 13), իսկ 19-ամյակի 1-ին տարին նիսան 14 (= A 4) տարիներն են, որոնք ունեն 9 տարվա տարբերություն:

Պատահական չէ, որ Անանիա Շիրակացին սահմանել է կանոն, թե վերը-րո՛ւ թվականը, հանի՛ր 9-ը, բաժանի՛ր 19-ի, մնացորդը ցույց կտա 19-ամյա-

կի համարը («ոսկե թիվը») սկսելով A 4-ի լրման տարուց: Իսկ «Պատճեններում» առկա է այլ կանոն, որի համաձայն՝ վերցրել են թվականը, բաժանել 19-ի, մնացորդում ստացած «ոսկե թիվը» ցույց է տվել 19-ամյակի համարը՝ սկսած A 13-ի լրման տարուց: Անանիա Շիրակացու կազմած Շ-եակ Զատկացուցակի հռոմեացոց և հայոց շարքերի 19-ամյակի համարներն ստանում ենք այդ սկզբունքների համաձայն: Էլ չենք խոսում այն մասին, որ Անանիա Շիրակացին հայոց շարքի լրման օրերը գտնելու համար սահմանել է 5 կանոն, և 19-ամյակի հայոց լրման օրերը համարժեք հռոմեականին գտնում ենք 19-ամյակի 1-ին տարվա կանոնով:

Անդրադառնանք Իրեոն վարդապետի կազմած Շ-եակին, որի մասին գրում է Անանիա Շիրակացին: Վերջինս թեև քննադատում է Իրեոնի հիմնարար սկզբունքները, սակայն հնարավորություն է ստեղծում վերականգնելու նրա 19-ամյակը, հետևապես և 532-ամյակը:

Դիմենք վկայություններին:

1. «Աստանար ասէ եղեալ զԻրոն վարդապետ դրանն արքունի ի քաղաքին Կոստանդնուպուլսի, որ ազգականութեամբ ատար եւ ոչ քաղաքացի, զոր ոմանք եւ աղէքսանդրացի իսկ գոլ ասացին: Զսա զչարեալ ասէ ընդ ժողովս իմաստասիրացն որ յԱղէքսանդրիա, իբր քամահանս իւր վարկանել զոչ անդր կոչեցեալ, հակառակ ճշմարտութեանն մաքառի, խոտէ զկարգեալն ի նոցանէ: Նոյնպէս եւ զառաջնոց եղեալսն գոզցես իբրեւ տգէտս զնոսա համարեալ, առնէ ժամանակագրութիւն նորաձայն, եւ ամենայն ժամանակագրաց, նոյնպէս եւ տոմար. եւ փոխէ զիննետասներեակն լուսնի ի վեցէն ապրեղի, եւ դնէ զնա զլուս բոլորի. եւ առնէ զիւր արինակ զտասն փարմութի ըստ եգիպտացոց, որ ի մէնջ պարմափիրն ձայնի. եւ դնէ զնա զլուս բոլորի՝ լրումն եւ անվերադրութիւն, հակառակ առաջնոցն: Որպէս եւ նոքա եբրայեցիսն հայելով ձեւացուցին, սորա նոյնպէս զեգիպտացիսն արարեալ արինակ, իբր թե ցուցանել իմաստասիրողացն Աղէքսանդրի(ա) եթէ յոյժ տգէտ էք. որ եւ ոչ ձերոց ազգիդ հմուտ էք. զիարդ այլոց ազգաց կարգեցէք տումար: Եւ զհռովմեացոցն այսպէս կարգեաց. եդ զհինգ ապրեղի՝ զլուս բոլորակի. եւ կարգեաց նմա վերադիր Ը, վասն զի երեքտասնարեայ ասաց զլուսին յաւուր ստեղծման իւրոյ. զուգելով զուրթ եւ զհինգ, այսինքն զվերադիրն եւ զլրումն ի խորհուրդ նմա համարեցաւ: Այդ եւ երեքտասան շրջառութիւն թուոյն լուսնականաց՝ զարեգակնայնեալն խորհուրդ նմին համարեցաւ. եւ արկանելով ի վերայ վերադիրն ԺԱ, ԺԱ թիվ մինչեւ ցկատարելն իննետասներեկին եւ բոլորին. եւ ապա երկոտասան թիվ արկանէ զվերադրովն ըստ կարգի կատարման իննետասներեկի. եւ ի վերայ լրմանն արկանելով քսան թիւ. եւ առնու ի բաց երկոտասան եւ մետասան ցկատարումն

իննեւտասներեկին եւ բոլորին. եւ ապա առնու ի բաց ԺԲ, ԺԲ վասն կատարման իննեւտասներեկին եւ խաղացուցանէ անոացեալ ծանուցեալ ի ճարտարութիւն արուեստին պանձալով. աղարտեալ խոտէ զառաջնոցն զիրս եւ բռնութեամբ հրամանի թագաւորին ընդ ամենայն աշխարհն զիրն հաստատեաց»:

2. «Բայց մեք քաւ եւ մի լիցի հաւանել ժամանակագրութիւնն Իրոնի շփոթելոյ եւ յաճախելոյ արտաքոյ աստուածային գրոց, եւ մի ընդունել զթիւս տոմարի նորա զխաբողականս. եւ լիցուք ընդ նզովիւք սուրբ հարցն: Քանզի գրեալ է այսպէս. Անիծեալ որ առնէ զատիկ ըստ տիրասպան ազգին հրէից, եւ կամ ընդ շամրտացոց եւ կամ ընդ Պաւղիանոսաց: Անիծեալ որ առնէ զատիկ յերեքտասան լուսնի: Արդ Իրոն թեպէտ եւ բիւր անգամ կարծէ ճարտարանալ, սակայն ոչ զերծանի ի նզովիցս յայսցանէ. զի որ ի միոյն փախչի եւ ի միւսն շաղախի, նման է այնմ, որ սակաւ աղաւթէ եւ բազումս հայհոյէ: Քանզի իբրեւ դիպի ի շաբաթու հինգ ապրեղի ըստ Իրոնական թուոյն, համարին զնա լրումն, եւ ի վեց ապրեղի առնեն զզատիկն, որ դիպի ի վեշտասան նիսան, եւ տանեն զոյգ ընդ հրէից, որ ստունկնեալ հարցն նզովից: Քանզի ոչ տանեալ է հրէից ի հնգետասան նիսան զտան զատիկ, այլ միշտ տանեն ի վեշտասան նիսան, նոքա եւ շամրտացիք հաստատագոյն քան զնոսա ունին, թեպէտ եւ ի նոցանէ են ուսեալք: Այլ եւ Պաւղիանոսք ի նմին աուր տանեն եւ զինչ աւր և դիպի լրմանն, կիրակէ անտանեն, որպէս եւ հրեայք շաբաթ անտանեն, թեպէտ եւ չիցէ շաբաթ»<sup>1</sup>:

3. «Արդ մի պատրաստեցուք ճարտարութեամբ արուեստին Իրոնի. զի եթէ քննեսցուք, ոչինչ ի նորա գտանի ճշմարիտ. թողում ասել զընդ նզովիւքն լինել այլ եւ ըստ արու(ե)ստին իսկ գործ ձեւացումն ըստ մտահաճութեան իւրոց եւ ոչ ըստ ճշմարտութեան. քանզի ի ժամանակագրութեան իւրում ՌՇ ասէ ի ծննդեան Փրկչին. եւ արինակ առնու զչափս տապանին վկայութիւն, ի հինգ կանգնոց եւ ի կիսոյ լեալ. եւ այս զինչ նմանութիւն իցէ արկէղ եւ ժամանակաց. եւ կամ զինչ նմանութիւն իցէ երեքտասանարեայ զլուսին ասել յաուր ստեղծման իւրոյ»<sup>2</sup>:

Շ-եակի 2-րդ՝ իրեոնյան տարբերակի մասին մանրամասն տեղեկություններ է տալիս Անանիա Շիրակացին: Այն, ինչպէս հաղորդում է Անանիա Շիրակացին, իրականացվել է Էասի ստեղծած Շ-եակից (562 թ.) հետո՝ 562-565 թթ., և Հուստինիանոս 1-ի (527-565 թթ.) հրամանով կիրառություն ստացել Հռոմեական կայսրության սահմաններում:

Իրեոն վարդապետի 1-ին տարին (= ապրիլ 5), հետևապես, Շ-եակի սկիզբն ընկնում է Հուստինիանոսի մահից հետո, այն է՝ 570 թվականին, ուստի

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 296-297:

<sup>2</sup> Անդ, էջ 297:

կարելի է մտածել, որ այն սկսել է 551 (570 - 19) թվականից, որպեսզի հասկանալի դառնա Հուստինիանոսի կարգադրությունը՝ Իրեոնի Շ-եակի կիրառության մեջ դնելու մասին վկայությունը:

Արդ Անանիա Շիրակացու հստակ տեղեկությունների հիման վրա վերականգնենք Իրեոնի վերադիրների համակարգն ու 19-ամյակը՝ սկսած 551 թվականից, որպեսզի համեմատենք Վ. Գրյումելի վերականգնածի, ապա Էաս Ալեքսանդրացու և Անանիա Շիրակացու 19-ամյակների հետ, այն է՝

19-ամյակի համարը	19-ամյակի լրման օրերի ամիս-ամսաթիվը	Վերադիրների համակարգը
1	Ապրիլի 5	8
2	Մարտի 25	19
3	Ապրիլի 13	30
4	Ապրիլի 2	11
5	Մարտի 22	22
6	Ապրիլի 10	3
7	Մարտի 30	14
8	Ապրիլի 18	25
9	Ապրիլի 7	6
10	Մարտի 27	17
11	Ապրիլի 15	28
12	Ապրիլի 4	9
13	Մարտի 24	20
14	Ապրիլի 12	1
15	Ապրիլի 1	12
16	Մարտի 21	23
17	Ապրիլի 9	4
18	Մարտի 29	15
19	Ապրիլի 17	27

Այս վերականգնումը ներկայացնենք վերոնշյալ զուգադրումներով:



Իրենոնի Շ-եակ թվական	Ներկա թվական	Իրենոնի 19-ամյակի ամսաթիվ	19-ամյակի համարները	Վերադիրները	Վ. Գրյունեյի վերականգնած համարները	Վ. Գրյունեյի վերականգնած լրման օրերը	Էասի և Շիրակացու 19-ամյակի լրման օրերը	Էասի և Շիրակացու վերադիրների համակարգը	Էասի և Շիրակացու 19-ամյակի 1-ին տարին հաշվման իմաստով	Էասի և Շիրակացու 19-ամյակի 1-ին տարին
1	551	A 5	1	8	19	A 5	A 6	7	18	9
2	552	M 25	2	19	1	M 25	M 25	19	19	10
3	553	A 13	3	30	2	A 13	A 13	30	1	11
4	554	A 2	4	11	3	A 2	A 2	11	2	12
5	555	M 22	5	22	4	M 22	M 22	22	3	13
6	556	A 10	6	3	5	A 10	A 10	3	4	14
7	557	M 30	7	14	6	M 30	M 30	14	5	15
8	558	A 18	8	25	7	A 18	A 18	25	6	16
9	559	A 7	9	6	8	A 7	A 7	6	7	17
10	560	M 27	10	17	9	M 27	M 27	17	8	18
11	561	A 15	11	28	10	A 15	A 15	28	9	19
12	562	A 4	12	9	11	A 4	A 4	9	10	1
13	563	M 24	13	20	12	M 24	M 24	20	11	2
14	564	A 12	14	1	13	A 12	A 12	1	12	3
15	565	A 1	15	12	14	A 1	A 1	12	13	4
16	566	M 21	16	23	15	M 21	M 21	23	14	5
17	567	A 9	17	4	16	A 9	A 9	4	15	6
18	568	M 29	18	15	17	M 29	M 29	15	16	7
19	569	A 17	19	27	18	A 16	A 17	26	17	8

Անանիա Շիրակացին հստակ գրում է, որ Իրենոն վարդապետը Էասի 19-ամյակի ապրիլի 6-ի լրման օրը կամայականորեն վերածել է ապրիլի 5-ի, դրանով իսկ սայթաքել ու ընկել նզովքի տակ, քանի որ 532-ամյակի 4 տարիների ապրիլի 5-ը եղել է շաբաթ և ապրիլի 6-ին տոնել են Զատիկը, որը համապատասխանել է հրեական Զատիկի օրվան. այդ տարիների Զատիկը հետագայում անվանել են Ծռազատիկ: Ծռազատիկներ եղել են ներկա՝ 570, 665, 766 և 1007 թվականներին:

Իրեոնի 19-ամյակի 1-ին տարվա վերադիրը 8 է, որով նա խախտել է «չորեքտասաներորդ»-ի կանոնը և կարծել, թե 19-ամյակի 1-ին տարում (Արարչության 1-ին տարում ևս) Լուսինը եղել է «երեքտասան արեայ» ( $5 + 8 = 13$ ), իսկ էսայանների ու Անանիա Շիրակացու մոտ 19-ամյակի նույն տարում լրման օրը ապրիլի 6-ն էր, իսկ վերադիրը՝ 9-ը, որով Լուսինը դառնում է 15 օրական ( $6 + 9 = 15$ ):

Իրեոնը վերադրի 1 օրվա ավելացումը կատարել է իր 19-ամյակի վերջին՝ ապրիլի 17-ի տարում, որը Վ. Գրյումելը փոխելով դարձրել է ապրիլի 16: Էսայաններն ու Անանիա Շիրակացին ևս ավելացումը կատարել են հաշվման իմաստով 19-րդ, իսկ 19-ամյակի 10-րդ՝ մարտի 25-ի լրման տարում:

Ի դեպ, ապրիլի 17-ի լրման ամսաթվի փոփոխության մասին (ապրիլի 16), որն առկա է ուշ շրջանի բնագրերում և ընդունել է Վ. Գրյումելն ու անհասկանալիորեն ծանոթագրել, թե այդ ամսաթիվը երբեք չի գործածվել, Անանիան նշում չունի:

Այդ դեպքում ապրիլի 16-ի լրման տարվա Զատիկն ինչպե՞ս են կատարել չէ՞ որ լրմանը հաջորդող կիրակի օրն է կատարվում Զատիկը: Մանավանդ որ վերադրին 1 օրվա ավելացումն անիմաստ է դառնում, երբ ապրիլի 17-ը վերածվում է ապրիլի 16-ի:

Լ. Սարգսյանը նրբորեն նկատել է, որ Էասի (Ա. Շիրակացու) և Իրեոնի 19-ամյակների լրման օրերը, բացառյալ մեկի (ապրիլի 6-ը ապրիլի 5-ի փոխվելու) նույնն են, սակայն նահանջյալ ամիսները, որոնք ավելացվում էին 19-ամյակի 7 տարիներին՝ (յուրաքանչյուր տարում 30 օր, ավելացրած 1 օր վերադրին = 211 օրվա՝ 19-ամյակում) որպեսզի համարժեք դառնային արևային ու լուսնային տարիները, Էասի ու Անանիա Շիրակացու Զատկացուցակներում ավելացվել են հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց 1-ին, 4-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ և 17-րդ տարիներին, իսկ 19-ամյակի 1-ին՝ ապրիլի 4-ի տարուց հաշված՝ 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 16-րդ և 19-րդ տարիներին: Վերջինին է հետևել Իրեոնը, հաշվելով 19-ամյակի 1-ին տարուց, միայն 16-րդ տարին փոխարինել է 17-րդով՝ որովհետև իր 17-րդ տարին է նահանջեալ իսկ լրման օրերը համարժեք են<sup>1</sup>:

Լուսնի զատկական լրման 19-ամյա պարբերաշրջանի տարբերակները՝ ըստ Վ. Գրյումելի և մեր վերականգնումների

Լուսնի զատկական լրման 19-ամյա պարբերաշրջանի տարբերակները՝ ըստ Վ. Գրյումելի և մեր վերականգնումների

<sup>1</sup> Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը, Եր., 2010, էջ 170-171:

Եբրայական			Անատոլիոսի			Ալեքսանդրյան			Վիկտորիոսի			Կ.գ <sup>1</sup>			Կ.Բ <sup>2</sup>			Էսայան՝ ըստ Վ. Գրյունելի			Էսայան՝ ըստ Ռ. Վ.			19.ամյ. հշվմ. իմաստ.		
1			2			3			4			5			6			7			8					
Տ. <sup>3</sup>	Զ.Լ. <sup>4</sup>		Տ.	Վ. <sup>5</sup>	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.	Տ.	Վ.	Զ.Լ.
1	A 4		1	11	A 4	12	1	A 4	3	11	A 3	10	9	A 4	9	9	A 4	11	(9)	A 4	1	9	A 4	10		
2	M 24		2	22	M 24	13	12	M 24	4	22	M 23	11	20	M 24 *	10	20	M 24 *	12	(20)	M 24	2	20	M 24	11		
3	M 13		3	3	A 12	14	23	A 12	5	3	A 11	12	1	A 12	11	1	A 12	13	(1)	A 12	3	1	A 12	12		
4	A 1		4	14	A 1	15	4	A 1	6	14	M 31	13	12	A 1	12	12	A 1	14	(12)	A 1	4	12	A 1	13		
5	M 21		5	25	A 20	16	15	A 21	7	25	M 20	14	23	M 21*	13	23	M 21*	15	(23)	M 21	5	23	M 21	14		
6	M 10		6	6	A 9	17	26	A 9	8	6	A 8	15	4	A 9	14	4	A 9	16	(4)	A 9	6	4	A 9	15		
7	M 29		7	17	M 29	18	7	M 29	9	17	M 28	16	15	M 29	15	15	M 29	17	(15)	M 29	7	15	M 29	16		
8	M18		8	28	A 17	19	18	A 17	10	28	A 16	17	26	A 17	16	26	A 17	18	(26)	A 17	8	26	A 17	17		
9	A 6		9	9	A 6	1	0-30	A 5	11	9	A 5	18	7	A 6	17	7	A 6	19	(7)	A 6	9	7	A 6	18		
10	M 26		10	20	M 26	2	11	M 25	12	20	M 25	19	18	M 26	18	18	M 26	1	(19)	M 25	10	19	M 25	19		
11	M 15		11	1	A 14	3	22	A 13	13	1	A 13	1	30	A 13	19	29	A 13	2	(30)	A 13	11	30	A 13	1		
12	A 3		12	12	A 3	4	3	A 2	14	12	A 2	2	11	A 2	1	11	A 2	3	(11)	A 2	12	11	A 2	2		
13	M 23		13	23	M 23	5	14	M 22	15	23	M 22	3	22	M 22	2	22	M 22	4	(22)	M 22	13	22	M 22	3		
14	M 11		14	4	A 11	6	25	A 10	16	4	A 10	4	3	A 10	3	3	A 10	5	(3)	A 10	14	3	A 10	4		
15	M 30		15	15	M 31	7	6	M 30	17	16	M 29	5	14	M 30 *	4	14	M 30 *	6	(14)	M 30	15	14	M 30	5		
16	M 19		16	26	A 19*	8	17	A 18	18	27	A 17	6	25	A 18	5	25	A 18	7	(25)	A 18	16	25	A 18	6		
17	A 7		17	7	A 8	9	28	A7	19	8	A 6	7	6	A 7	6	6	A 7	8	(6)	A 7	17	6	A 7	7		
18	M 27		18	18	M 28	10	9	M 27	1	19	M 26	8	17	M 27	7	17	M 27	9	(17)	M 27	18	17	M 27	8		
19	M 16		19	29	A 16	11	20	A 15	2	30	A 14	9	28	A 15	8	28	A 15	10	(28)	A 15	19	28	A 15	9		

<sup>1</sup> Կ. գ. – kata; qevsin (ըստ դրոլթյան):

<sup>2</sup> Կ. Բ. – Kata: kata fivsin (ըստ բնության):

<sup>3</sup> Տ. Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի լրման ամիս-ամսաթվերի համարների հաջորդականությունը:

<sup>4</sup> Զ. Լ. - Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի լրման ամիս-ամսաթվերը:

<sup>5</sup> Վ. - վերադիրները:

Իրենի՝ ըստ Վ. Գրյումելի			Իրենի՝ ըստ Ռ. Վ.			Զատկական Ժամանակագր ույթյուն			Հայոց			Հայոց			Անդրեաս՝ ըստ ուսումնասիրող ների			Հատ. Թարգմ,			Անդրեաս՝ ըստ Ռ. Վ.					
1			2			3			4			5			6			7			8					
S.	Ձ.Լ.		S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.	S.	Վ.	Ձ.Լ.
11	(9)	A 4	12	9	A 4	9	10	A 4	1	9	A 4	10	9	A 4	1	11	A 4	1	1	A 4	1	11	A 4			
12	(20)	M24	13	20	M 24	10	21	M 24	2	20	M 24	11	20	M 24	2	22	M 24	2	12	M 24	2	22	M 24			
13	(1)	A12	14	1	A 12	11	1	A 12	3	1	A 12	12	1	A 12	3	3	A 12	3	23	A 12	3	3	A 12			
14	(12)	A 1	15	12	A 1	12	13	A 1	4	12	A 1	13	12	A 1	4	14	A 1	4	4	A 1	4	14	A 1			
15	(23)	M21	16	23	M 21	13	24	M 21	5	23	M 21	14	23	M 21	5	25	M 21	5	15	M 21	5	25	M 21			
16	(4)	A 9	17	4	A 9	14	5	A 9	6	4	A 9	15	4	A 9	6	6	A 9	6	26	A 9	6	6	A 9			
17	(15)	M29	18	15	M 29	15	16	M 29	7	15	M 29	16	15	M 29	7	17	M 29	7	7	M 29	7	17	M 29			
18	(26)	A16	19	27	A 17	16	27	A 17	8	26	A 17	17	26	A 17	8	28	A 17	8	18	A 17	8	28	A 17			
19	(7)	A 5	1	8	A 5	17	8	A 5	9	7	A 6	18	7	A 6	9	9	A 6	9	30	A 5	9	9	A 6			
1	(19)	M25	2	19	M 25	18	19	M 25	10	19	M 25	19	19	M 25	10	21	M 26	10	11	M 25	10	21	M 25			
2	(30)	A 13	3	30	A 13	19	30	A 13	11	30	A 13	1	30	A 13	11	2	A 14	11	22	A 13	11	2	A 13			
3	(11)	A 2	4	11	A 2	1	12	A 2	12	11	A 2	2	11	A 2	12	13	A 3	12	3	A 2	12	13	A 2			
4	(22)	M22	5	22	M 22	2	23	M 22	13	22	M 22	3	22	M 22	13	24	M 23	13	14	M 22	13	24	M 22			
5	(3)	M10	6	3	A 10	3	4	A 10	14	3	A 10	4	3	A 10	14	5	A 10	14	25	A 10	14	5	A 10			
6	(14)	M30	7	14	M 30	4	15	M 30	15	14	M 30	5	14	M 30	15	16	M 30	15	6	M 30	15	16	M 30			
7	(25)	M18	8	25	A 18	5	26	A 18	16	25	A 18	6	25	A 18	16	27	A 18	16	17	A 18	16	27	A 18			
8	(6)	A 7	9	6	A 7	6	7	A 7	17	6	A 7	7	6	A 7	17	8	A 7	17	28	A 7	17	8	A 7			
9	(17)	M27	10	17	M 27	7	18	M 27	18	17	M 27	8	17	M 27	18	19	M 27	18	9	M 27	18	19	M 27			
10	(28)	A15	11	28	A 15	8	29	A 15	19	28	A 15	9	28	A 15	19	30	A 15	19	20	A 15	19	30	A 15			

Լուսնի զատկական լրման 19-ամյա պարբերաշրջանի տարբերակների աղյուսակից երևում է, որ 19-ամյակի առաջին տարին նիսանի 14 (= ապրիլի 4)-ը ծագում է եբրայականից ու քրիստոնեական ավանդույթից, երբ Զատիկը տոնում էին հրեաների հետ միասին, անգամ 2-րդ տարբերակի ստեղծումից հետո, երբ եբրայական լրումներից անցնում էին հաջորդող կիրակի (185 թ.): Անատոլիոս Լաոդիկեցին պահեց նիսանի 14 (= ապրիլի 4)-ի ավանդույթը՝ իբրև 19-ամյակի առաջին տարի, սակայն խմբագրեց եբրայական 19-ամյակը, հավանաբար, 277 թ., ու «նահանջյալ» ամիսները՝ 30-ական օրերով, ավելացրեց եբրայական 19-ամյակի գարնանային գիշերահավասարից (= մարտի 20) առաջ ընկնող լրման 7 տարիների վրա, որպեսզի մեկ տարվա ընթացքում 2 Զատիկ չտոնեին ու արևային ու լուսնային տարիները համարժեք դառնային, այսինքն ունենային օրերի միևնույն քանակը 19-ամյակի ընթացքում: Անատոլիոսի 19-ամյակն ընդունվեց Նիկիայի ժողովի կողմից, երբ վերջնականորեն անցում կատարվեց քրիստոնեական Զատիկին: 19-ամյակի առաջին տարին դարձնելով նիսանի 14 (= ապրիլի 4)-ը՝ այն ընդունեցին Անդրեասը, երբ ստեղծեց 200-ամյա Զատկացուցած, 449 թ. Կյուրեղ Ալեքսանդրացու Զատկացուցակի լատիներեն թարգմանիչը, երբ Կյուրեղի Զատկացուցակի Դիոկլետիանոսի թվականը փոխարինեց Խաչելության թվականով, Էաս Ալեքսանդրացին, երբ 562 թ. ստեղծեց Շ-եակ Զատկացուցակ: Վերջինս 19-ամյակի առաջին տարին ընդունելով հանդերձ նիսանի 14 (= ապրիլի 4)-ը, հաշվման իմաստով Շ-եակն սկսեց ապրիլի 13-ի լրման տարուց՝ շարունակելով Անդրեասի 200-ամյակը: Էասին հետևեցին Անանիա Շիրակացին ու հայ տոմարագետները: Այլ խոսքով նիսանի 14 (= ապրիլի 4)-ն ընդունեցին 19-ամյակի առաջին տարի՝ հետևելով քրիստոնեական ավանդույթին, հատկապես, Քրիստոսի խաչելության տարվա (30 թ.) լրման օրը՝ Զատիկը, նիսանի 14 (= ապրիլի 4)-ին լինելու պատճառով:

Ք.գ -ի հեղինակները, փաստորեն, ընդունեցին Էասյան 532-ամյա Զատկացուցակը՝ իր 19-ամյակով հանդերձ, սակայն 19-ամյակի 1-ին տարին համարեցին Էասյանների՝ հաշվման իմաստով 1-ին տարին՝ նիսանի 23 (= ապրիլի 13)-ը: Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչները (Պետրոս Ալեքսանդրացի (304 թ.), Թեոֆիլ Ալեքսանդրացի (380-ական թթ.), Կյուրեղ Ալեքսանդրացի (399-463 թ.)), ընդունեցին Անատոլիոս Լաոդիկեցու ռեֆորմը, սակայն 19-ամյակի 1-ին տարին տեղափոխեցին ապրիլի 5-ի լրման տարի, որին հետևեց Դիոնիսիոս Կրտսերը (532 թ.) երբ Կյուրեղ Ալեքսանդրացու հիմքի վրա կազմեց 95-ամյա Զատկացուցակ: Սրանց հետևեց Իրենոս վարդապետը (562-565 թթ.), երբ կազմեց 532-ամյա Զատկացուցակի իր տարբերակը, և Զատկական

ժամանակագրությունը կազմող հեղինակը (7-րդ դ.): Ասենք նաև, որ *Կ.գ.*-ին հետևողները 19-ամյակի 1-ին տարին տեղափոխեցին ապրիլի 2-ի լրման տարի, որին հետևեցին բյուզանդական մի քանի հեղինակներ: Այլ խոսքով Լուսնի զատկական լրումների 19-ամյա պարբերաշրջանի տարբերակների զարգացման պատկերը հստակ է, համենայն դեպս, 4-7-րդ դարերի կտրվածքում, իսկ երբ ստեղծվեցին 532-ամյա կատարյալ Զատկացուցակները, 19-ամյակի՝ 1-ին տարվա նոր տարբերակների ստեղծումն այլևս խնդիր չէր:

Լ. Սարգսյանը նկատել է, որ Էասյան Շ-եակի, հետևապես 19-ամյակի հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց սկսած համարժեքություն կա հայոց Զատկացուցակի, *Կ.գ.*-ի վերականգնված 19-ամյակի, ինչպես առաջին, այնպես մյուս տարիների լրման օրերի ու վերադիրների համակարգի միջև՝ բացառությամբ 19-րդ տարվա լրման օրվա և վերադիր արժեքի, որն ըստ Էասյանների ու հայոց զատկացուցակների՝ մարտի 25-ն է, վերդիրը՝ 19, իսկ ըստ վերականգնված *Կ.գ.*-ի՝ մարտի 26-ը, վերադիրը՝ 18: Իսկ քանի որ հաջորդ՝ ապրիլի 13-ի լրման տարվա վերադիրը 30 է, և վերադիրը 12-ով է ավելացվել 11-ի փոխարեն, անհրաժեշտ է *Կ.գ.*-ում ուղղել վերադիրը՝ 19 (30-11), իսկ լրման օրը մարտի 25: *Կ.գ.*-ում կա՛մ 19-րդ տարվա արևային ու լուսնային տարիների համարժեքությունն ապահովել են մեկ օր ավելացնելով ամսաթվին՝ մարտի 25-ը դարձնելով 26, կա՛մ այն ավելի վաղ ստեղծված 19-ամյակներից մեկի մնացուկն է: Ինչևէ, սրբագրելով *Կ.գ.*-ի 19-րդ տարվա լրման ամսաթիվն ու վերադիր արժեքը, ստացվում է Էասյան 19-ամյակի և հայոց Զատկացուցակի հոմեացոց շարքի բացարձակ համարժեքություն: Վերոբերյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ *Կ.գ.*-ի հեղինակները, ինչպես և Անանիա Շիրակացին Զատկացուցակի հոմեական շարքը կազմելիս հետևել են Էասյաններին՝ 19-ամյակը, հետևապես կատարյալն սկսելով Շ-եակի հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց<sup>1</sup>:

*Կ.գ.*-ում նույն պատկերն է, միայն առաջին տարին տեղափոխել են ապրիլի 2-ի լրման տարի՝ դրանով իսկ տարբերվել Էասյաններից: Հարկ է նշել, որ հայոց մեջ Արարչություն Կ. Պոլսի և հունաց թվականի կանոնները սահմանելիս՝ 19-ամյակի 1-ին տարին ընկալել են ապրիլի 2-ի լրման տարին, ինչպես և Զատկացուցակում ապրիլի 2-ի լրման տարուց են սկսել սահմանել վերադիրների, հնգյակի ու վեցյակի կանոնները, որպիսիք են նաև *Կ.գ.*-ի ու *Կ.գ.*-ի կանոնները<sup>2</sup>:

<sup>1</sup> Լ. Սարգսյան, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը, էջ 177:

<sup>2</sup> Անդ:

Անանիա Շիրակացին Զատկի ճառում անդրադառնում է 19-ամյակում, հետևապես, Շ-եակում արևային ու լուսնային տարիների համարժեքությունը խնդրին, իսկ հետագայում առավել մանրամասնում այն: Մեջ բերենք այդ տեղեկությունը. «Արդ քանզի տուշովին եկեղեցույ ուսուցանէ պահել ամի ամի զար բաղարջակերացն եւ յորժամ դիպի չորեքտասան լուսնի ի չորս աւելեացն մինչեւ ի քսան եւ ութերորդն (նիսանայ), այսինքն է [ԺԸ ապրիելի] պահեմք եւ առնեմք զատիկ: Իսկ եթէ չորս աւելեացն է, անդրէն յադարս ամիս կոյս կատարիցի երկոտասան թիւք լուսնոյ, միւս եւս այդ ամիս յաւելումք ի վերայ երկոտասան ամսոյն, որ անուանեալ կոչի ն(ա)հանջեալ Զի յայն ամս քանզի պակաս գտանի թիւք ընթացից լուսնի քան զթիվ արեգական, այս այսպէս կազմեցաւ, զի ն(ա)հանջեալ ամաւք լիցի, որպէս երթիցէ հասցէ թիւ ընթացից լուսնի թուոյ ընթացից արեգական, զի եթէ այս այսպէս ոչ լինէր, դիպէին երբեք երբեք երկու զատիկք ի միում ամի, այդ ն(ա)հանջեալ ամիսքն ձգեցեն ածցեն զմեզ: Զի միշտ յետ հասարակելոյ տունջեան եւ գիշերոյարասցուք զզատիկն. Քանզի նոքաւք հասանիմք զամիս առաջին (նիսան), եւ զայն պարտ եւ պատշաճ է յաւելլով ի հարկէ. Քանզի զարինակ եւ զնմանութիւն յառաջնումն ամսեանն հրամայել առնել ի հնումն: Զի չէ իշխանութիւն եկեղեցույ յերկոտասաներորդում (ադար) ամսեանն առնել զզատիկն, որպէս եւ աստուածայինն առաքեալ ասէ. թէ Առաջինքն անցին, եւ ամենայն ինչ վերստին նորոգեցաւ Քրիստոսի: Եւ արդ այսուհետեւ ամի ամի զնոյն տրտմութիւն զոր սգեցան առաքեալքն, պահաւք զգեցցուք եւ մեք. Եւ ի յարութեան միաձնին ուրախ լիցուք, հաղորդելով մարմնոյ եւ արեան ճշմարիտ գառին, որ է հացն երկնաւոր»<sup>1</sup>:

Անանիա Շիրակացին արևային ու լուսնային տարվա համարժեքությունը տալիս է երբայական տոմարի ամիս-ամսաթվերով, այն է՝ աւելեաց 4-ից (= մարտի 20): Գարնանային օրահավասարից առաջ եղած լրման օրերին պետք է ավելացնել նահանջյալ ամիսները (ադարի 30-ական օրերը) 19-ամյակի 7 տարիներին, որից հետո եկող կիրակին է Զատկի օրը: Իսկ գարնանային օրահավասարից հետո եղած լրման տարիներին (M 22 – A 18)՝ պետք է կատարել Զատիկը դրանց հաջորդող կիրակի օրը:

Ի վերջո, քննենք նաև Իրեոնի ժամանակագրության Արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած 5500 տարվա հարցը, որը քննադատել է Անանիա Շիրակացին: Վերջինիս տեղեկությունից, այն է՝ «եւ կամ զինչ նմանութիւն իցէ երեքտասան արեայ զլուսին ասել յաւուր ստեղծման իւրո»<sup>2</sup>

<sup>1</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 299:

<sup>2</sup> Անդ, էջ 297:

երևում է, որ Իրեոնը Արարչություն 1-ին տարին ընդունել է ապրիլի 5-ի լրման տարին, այսինքն՝ իր 19-ամյակի 1-ին տարին համարժեք է դարձրել Ադամի 1-ին տարվան: Ուստի 5500-ը բաժանելով 19-ի ( $5500 : 19 = 9$  մն.)՝ մնացորդում պետք է ստանանք Քրիստոսի ծննդյան տարվա լրման օրը, որը իր 19-ամյակում ապրիլի 7-ի լրման տարին է: Նույն պատկերն է ստացվում, երբ 5500-ին գումարում ենք 551 (ներկա թվականի համարժեք տարին 19-ամյակի 1-ին տարին), լինում է 6051, որը բաժանելով 19-ի, ունենում ենք ապրիլի 7-ի լրման տարին, այնինչ պետք է լիներ մարտի 25-ի լրման տարին. դրանք միմյանցից ունեն 7 տարվա տարբերություն: Հետևապես Իրեոնը հաշվարկը կատարել է 7 տարվա սխալով:

### **ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ» ԵՎ «ԶԱՏԿԻ» ՃԱՌԵՐԻ**

#### **Ռաֆիկ Վարդանյան, Լևոն Սարգսյան**

**Բանալի բառեր:** Անանիա Շիրակացի, Ս. Ծնունդ և Հայտնություն, Զարկացուցակ, հունվարի 6, դեկտեմբերի 25, մեկնողական ճառ, քրիստոնեական տոնացույց, քրիստոնեական տոնացույցի հայկական փարբերակ, Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջան, 532-ամյա պարբերաշրջան:

Ա. Շիրակացին «Յայտնութեան» մեկնողական ճառում տալիս է Քրիստոսի Ծննդյան և Յայտնութեան (Մկրտութեան) հունվարի 6-ից ութօրեա կանոններով, ինչպես և Քրիստոսի Ծննդեան դեկտեմբերի 25-ի ու Յայտնութեան հունվարի 6-ի տոների զարգացման պատմությունը (4-6-րդ դդ.)՝ հիմնվելով ժամանակակից սկզբնաղբյուրների վրա և պաշտպանելով նախաեփեսոսյան ավանդույթը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նիկիայի ժողովից (325 թ.) մինչև Անտիոքի ժողովը (341 թ.) ստեղծվել է «Կանոնադրութիւն ընթերցածոց»-ի 2 տարբերակ, որոնցից մեկը՝ Երուսաղեմյանը, Անտիոքի ժողովականները վերագրել են առաքյալներին և ընդունել իբրև առաջին անգամ համակարգված համաքրիստոնեական տոնացույց, որի 2-րդ խմբագրությունը իրականացրեց Կյուրեղ Երուսաղեմացին 380-381 թթ., իսկ 3-րդը՝ Հովհաննես Երուսաղեմացին (414(6)-417թթ.): Այդ ավանդույթը՝ հունվարի 6-ի ութօրյա կանոններով պահպանվեց, որի հիմնավորումը գտնում ենք համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակում՝ «Կանոնադրութիւն ընթերցածոց»-ի Երուսաղեմյանի թարգմանություն-խմբագրության մեջ՝ կատարված Սահակ կաթողիկոսի կողմից, 422 թ.: Այն Արևելյան Հռոմեական կայսրության մեջ տևեց մինչև Հուստինիանոս 1-ի բռնությունները (553 թ. և 560թ.):

Ըստ Ա. Շիրակացու՝ Կոստանդիանոսի որդի Կոստանդոսի ժամանակ (337-361 թթ.) «ընկալեալ եղեւ տան այս (դեկտեմբերի 25-ին Քրիստոսի ծնունդը տոնելը) ի դռան արքունի (Հռոմ – Ռ. Վ.) ...», բայց ի մայրաքաղաքացն (Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Անտիոք և Եփեսոս) չորից հայրապետացն, որ ունէին աթոռ սրբոց ավե-



տարանչացն»: Իսկ Արևելյան Հռոմեական կայսրության մեջ որոշ քաղաքներում (Կ. Պոլիս) տարածվեց 380-ականի սկզբներին, իսկ վերջնականապես Հուստինիանոս 1-ինի բռնությունների ժամանակ (560 թ.):

\*\*\*

Ա. Շիրակացին հաջորդ ճառը՝ «Ի Զատիկն Տեառն», նվիրել է Քրիստոսի Հարության տոնին: Նա համաձայն աստվածաշնչի և քրիստոնեական ավանդույթի, Զատիկի տոնը կապելով Մովսեսի անվանը, Ելքի ու Քրիստոսի Խաչելությանը՝ առնչում է իր հաշվման համակարգերի հետ:

Ա. Շիրակացին Ելքի ու Քրիստոսի Խաչելության տարիները, իսկապես, կապել է ապրիլի 4-ի լրման տարվա հետ՝ իբրև 19-ամյակի և Ադամի 1-ին տարի, ինչպես և Արարչության համակարգելով հաշվարկել է վերոնշյալ տարիները՝ առնչելով ապրիլի 13-ի և ապրիլի 4-ի, ինչպես և ապրիլի 2-ի՝ առաջին տարիներով սկսվող 19-ամյակի հետ, որը 532-ամյա պարբերաշրջանի բաղադրամասն էր: Նա համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջինն էր, որ համակարգեց և հաշվարկեց Ելքի ու Խաչելության տարիները՝ ավանդությունները վերածելով թվականության համակարգերի ու ներկա թվականի: Ա. Շիրակացին ներկայացնում է նաև Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի, քրիստոնեական Զատիկի և ՇԼԲ (532) Զատկացուցակի սկզբնավորման ստույգ պատմությունը: Վերջիններս վաղ շրջանի այլ սկզբնաղբյուրներից հայտնի չեն:

### ХРИСТИАНСКИЕ ПРАЗДНИКИ ПО СЛОВАМ ОБ «ОТКРОВЕНИИ» И «ПАСХЕ» АНАНИЯ ШИРАКАЦИ

*Рафик Варданян, Левон Саргсян*

**Ключевые слова:** *Анания Ширакаци, Св. Рождество и Откровение, Пасхальные таблицы, 6-ое января, 25-ое декабря, экзегетическое слово, христианский календарь, армянский вариант христианского календаря, 19-летний цикл полнолуния, 532-летнего цикл.*

А. Ширакаци в своем экзегетическом слове «Об Откровении» начинает отчет праздника Рождества и Откровения (Крещения) Христа с 6-го января (восьмидневными канонами), а также на основе современных первоисточников представляет историю (4-6 вв.) празднования Рождества Христа в 25-е декабря и Откровения 6-го января, оставаясь верным предефесской традиции.

Наши исследования показывают, что с Никейского Собора (325 г.) по Антиохский Собор (341 г.) были созданы 2 варианта «Календаря» («Каноны о читаемых священных текстах»). Участники Антиохского Собора Иерусалимский вариант приписали апостолам и признали первым систематизированным общехристианским календарем, вторая редакция которого была осуществлена Кириллом Иерусалимским в 380-381гг., а третья - Иоанном Иерусалимским (414(6)-417 гг.). Традиция отчета с 6-го января восьмидневными канонами была сохранена, что и обосновывается в армян-

ском варианте общехристианского календаря – в переведеноной Иерусалимской редакции «Канонов о читаемых священных текстах» (арм. «Канонадрутюн Ենտեր-ցաцоц»), осуществленной католикосом Сааком в 422г. Она сохранилась в Восточной Римской Империи до гонений Юстиниана 1-го (553 г. – 560 г.).

Согласно А. Ширакаци в годы правления сына Константина Костанция (337-361 гг.) «этот праздник (установление празднования Рождества Христова 25 декабря) приняли в имперском дворе Рима, за исключением католикосов четырех столиц (Иерусалим, Александрия, Антиохия и Ефес)». А в Восточной Римской Империи в нескольких городах (Константинополь) традиция устаноавливается в начале 380-ых годов, а окончательное распространение получает в период гонений Юстиниана 1-го (560 г.).

\*\*\*

А. Ширакаци следующее слово «О Пасхе Господне» посвящает празднику Воскресения Христа. Он, согласно Св. Писанию и христианской традиции, связывает праздник Святой Пасхи с именем Моисея, Исходом и Распятием Христа, соотнеся с системами собственных подсчетов.

А. Ширакаци годы Исхода и Распятия Христа, на самом деле связал с годом фазы полнолуния 4-го апреля, в качестве года первых годов Адама и 19-летнего цикла, а также года Творения, систематизируя подсчитал вышеупомянутые даты, приняв в качестве подсчета 13-е апреля и 4-е апреля, а также с 2-е апреля, начинающиеся первыми годами 19-летнего цикла, который был составной частью 532-летнего цикла. Он был первым, кто во общехристианских летописных сочинениях подсчитал годы Исхода и Распятия, превращая традицию в систему летоисчисления и в настоящий год. А. Ширакаци предоставляет также подлинную историю образования 19-летнего цикла полнолуния, христианской Пасхи и 532-летнего цикла Пасхальных таблиц (Святки), которые не засвидетельствованы в ранних источниках.

#### **CHRISTIAN FEASTS ACCORDING TO HOMILIES ON REVELATION AND EASTER BY ANANIA SHIRAKATSI**

*Rafik Vardanyan, Levon Sargsyan*

**Keywords:** *Anania Shirakatsi, Christmas, Revelation, Eastertide, January 6th, 25th December, exegetic homily, Christian calendar, Armenian version of Christian calendar, 19-year cycle of the moon, 532-year cycle of Eastertide tables.*

In an exegetic homily the *Revelation* Anania Shirakatsi presents as the history of Christmas and Revelation (Baptism) on January 6<sup>th</sup> starting with the eight days canons, as well the development of the tradition of celebration of Christmas on 25<sup>th</sup> December and celebration of Revelation on January 6<sup>th</sup> (4-6<sup>th</sup> centuries); to do this he reposes on sources of these times and defends the Pre-Ephesian tradition. Our investigations show that between the councils of Nicaea (AD 325) and Antioch (AD 341) there were established two

versions of the “Regulation of Readings” and that one of them, the Jerusalemian one, was accepted by those who gathered in Antioch as a first systematic Christian calendar; it was ascribed to the Apostles but later on, in 380-381 it was edited by Cyril of Jerusalem, and then, in 414(6)-417 edited again by John of Jerusalem. This tradition was preserved in the eight days canons of January 6<sup>th</sup> and as a justification for this tradition can serve an Armenian version of Christian calendar, i.e. an edited translation of the Jerusalemian “Regulation of Readings” made by catholicos Sahak in 422. The celebration of Christmas on 6<sup>th</sup> January was in use in the Eastern Roman Empire until repressions of Justinian I (in 553 and 560). According to Anania Shirakatsi at the time of Constans (337-361), the son of Constantine the Great, they started to celebrate the Christmas on 25<sup>th</sup> December - “... this fest was accepted at the Royal palace (Rome – R.V.) but not in the capitals of the four patriarchates, which had the sees of holy evangelists (Jerusalem, Alexandria, Antioch and Ephes). As to the Eastern Roman Empire in some cities (e.g. Constantinople) this tradition became spread from the 380-ties and totally expanded at the time of the repressions of Justinian I (560).

\*\*\*

The second homily on the Easter of Lord Anania Shirakatsi dedicated to the fest of the Resurrection of Christ. In accordance with the Bible and Christian tradition, he also links this fest with the name of Moses, Exodus and Crusifixion of Christ and relates to the systems of his calendar accounting. The dates of the Exodus and the Crusifixion of Christ Anania Shirakatsi really linked with the compilation of the year on 4<sup>th</sup> April – as a natural 19-year cycle and the first year of Adam, as well the creation of the world; by coordinating he calculated all these years and correlated with the first years started by April 13<sup>th</sup>, by April 4<sup>th</sup> and by April 2 of the 19-year cycle, which was a component of the 532-year cycle. In Christian tradition Anania Shirakatsi was the first who systematized and calculated the dates of the Exodus and the Crusifixion of Christ by turning the tradition into the era system and current date. Anania Shirakatsi submits as well the exact history of the 19-year cycle of the moon, Christian Easter and the formation of the 532-year cycle of Eastertide tables. The latter ones are not witnessed in any other early sources.